

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ - ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ (ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ) ՄՈՑԻԱԼ - ԶԱՂԱԶԱԿԱՆ ԱՍՏԻՐԱՆ

Թ. Լ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Այսօրվա ընթերցողին Կոստանդին Մելիք-Օահնազարյանի անունը քիչ բան կարող է ասել (նրա ստեղծագործությունը ցարդ չի վերահրատարակվել), մինչդեռ նրա ներդրումը մեծ է և՛ արևելահայ երգիծական գրականության, և՛ ժողովրդագիտության, և՛ մասնավորապես մեր հասարակական հիշողությունը արթուն պահելու գործում:

Ծնվել է 1857 թ. ապրիլի 15-ին, Օուշիում¹: Սերել է Խաչենի իշխանության Սողո գավառից, XVI-XVII դարերի սահմանագլխին Վարանդա տեղափոխված հայտնի Օահնազարյանների մելիքական տոհմից: Հինգ տարեկանում Կոստանդինը զրկվում է հորից, և ընտանիքը մնում է հորեղբոր խնամքի տակ: Ութամյա տղան սկզբում հաճախում է «բանաստեղծ Արությունի» դպրոցը, պապ ուսումը շարունակում է ռուսական դպրոցում: 1869 թ. ընդունվում է Օուշիի թեմական դպրոցը, ուր աշակերտում է նշանավոր հայկաբան Մաղաքիա Պլուզյանին: Թեմականում Կոստանդինը սովորում է Գրիգոր Տեր-Հովհաննիսյանի (Մուրացյան), Առաքել Բաբախանյանի (Լեռ) և ուրիշների հետ: 1874 թ. հինգ-վեց լավագույն աշակերտների թվում Կոստանդինը ևս իրավունք է ստանում սովորելու Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ուր պարզորոշ դրսևորվում են պատանու գրական հակումները: Նա խմբագրում է աշակերտական «Մանրանկար» ձեռագիր ամսագիրը: 1878 թ. վերակացուների կամայականությունների դեմ ուղղված ուսանողական հուզումներին մասնակցելու պատճառով Կոստանդինը վտարվում է ճեմարանից: 1879-80 թթ. ավագ դասատուի պաշտոնով աշխատում է Դերբենդի Մարիայան օրիորդաց ուսումնարանում, իսկ 1880 թ. արևելյան լեզուներ ուսումնասիրելու նպատակով Մելիք-Օահնազարյանը ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի լսարանական բաժին, սակայն նյութական միջոցների սղության պատճառով ամիսներ անց վերադառնում է Դերբենդ և շարունակում իր մանկավարժական գործունեությունը: 1882 թ. Կոստանդինը տեղափոխվում է Թիֆլիս և մեկ տարի Հովհաննյան դպրոցում ուսուցչություն անելուց հետո, 1883 թ. իր չորս տարվա պաշտոնավարության միջոցին խնայած 800 ռուբլով մեկնում է Եվրոպա և ընդունվում Մոնպելիեյի (Ֆրանսիա) նշանավոր երկրագործական բարձրագույն դպրոց: Այնուհետև կարճ ժամանակով անցնում է Օվեյնյարիա և ուսումնասիրում պանրագործությունը: 1883-85 թթ. գրած հոդվածներում Մելիք-Օահնազարյանը կարևորում է գյուղատնտեսության դերը ժողովրդական տնտեսության զարգացման գործում և արտասահմանից նյութեր է ուղարկում «Նոր-Դարին»: 1885 թ. նա վերադառնում է Դերբենդ և զբաղվում գյուղատնտեսությամբ: 1886-ին տեղափոխվում է Վրաստանի Սագարեջոյի շրջան, գյուղացիներին ծանոթացնում շերամապահությանը: Հետագա տարիներին գյուղատնտես է աշխատում Աղդամում, Միջին Ասիայում, Բաքվում, Եվլախում, Գանձակում և այլուր: 1905-06 թթ. ազգամիջյան ընդհարումների հետևանքով ավերված տնտեսությունների ճակատագրով խորապես մտահոգված՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին հղած նամակում Կ. Մելիք-Օահնազարյանը խնդրում է Վեհափառին Էջմիածնի ճեմարանին կից բացել գյուղատնտեսական դասընթացներ¹: 1906 թ. Խրիմյան Հայրիկի հրավերով Մելիք-Օահնա-

¹ Կենսագրական տվյալները քաղված են հեղինակի ձեռագիր ինքնակենսագրությունից (Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Կ. Կ. Մելիք-Օահնազարյանի ֆոնդ, 177):

¹ Տե՛ս ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Օահնազարյանի ֆոնդ, 107:

գարյանը տեղափոխվում է Էջմիածին և մինչև 1909 թ. Էջմիածնի կալվածքների կառավարչի պաշտոնն է կատարում: Նա միաժամանակ գյուղատնտեսական գիտելիքներ է տարածում:

1918 թ. սեպտեմբերին, կորցնելով ողջ ունեցվածքը, Մելիք-Շահնազարյանը հազիվ է կարողանում իր զավակներին փրկել Բաքվի հայտնի ջարդերից: 1919 թ. նա հաստատվում է Հայաստանում, աշխատում գյուղատնտեսության բնագավառում՝ նշանակալի ավանդ ներդնելով հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում: Հրատարակել է մոտ չորս տասնյակ գրքեր և գրքույկներ՝ «Ուղեցույց գործնական գինեգործության» (1885 թ.), «Ծխախոտը և իր վնասները» (1888 թ.), «Գործնական ձեռնարկ արևի տակ պտուղներ չորացնելու» (1929 թ.), «Ինչպես պետք է հավաքել դեղաբույսերը» (հեղինակակից Վ. Պ. Կալաշնիկով, 1934 թ.) և այլն:

XIX դարի 50-60-ական թվականներից սկսած հայ հասարակական միտքը գործունե հետաքրքրություն է ցուցաբերում ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի նկատմամբ, նոր թափ են առնում ժողովրդական բանահյուսության նմուշների ինչպես հայտնաբերման ու գրառման, այնպես էլ հրատարակման և ուսումնասիրման աշխատանքները: Երիտասարդ բանահավաք – հրատարակիչ Տիգրան Նավասարդյանն այդ մտահոգությամբ XIX դարի 70-80-ական թվականներին հայկական մամուլում հանդես է գալիս հատուկ կոչ-դիմումով՝ ուղղված հայ հասարակայնությանը²: Տ. Նավասարդյանին արձագանքում են շատերը, այդ թվում նաև Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործի նախանձախնդիր Մակար Բարխուդարյանը³, որի հորդորով Տմբլաչի Խաչանը, Արցախ պատմաազգագրական շրջանում աշխուժություն առաջացնելու և բանահյուսության հավաքման գործին նպաստելու նպատակով ժողովրդական կենդանի բառ ու բանով համեմված իր ֆելիետոններով հանախակի հանդես է գալիս ժամանակի հայկական մամուլում: Տիգրան Նազարյանի ջանքերով 1882 թ. Շուշիում հրատարակվում է «Ղըլըցե կնանոց պընը փեշակը»՝ գրքույկը՝ գրված դարաբաղյան հյութեղ և հատու բարբառով, արտահայտչամիջոցների կուտակումներով, ժողովրդական կենսափորձն ու իմաստությունը արտահայտող ասացվածքներով, թևակոր խոսքերով: Այստեղ ծաղրվում է գավառական քաղցեմիների վարքն ու բարքը, սահմանափակ հետաքրքրությունները, մանրացող և գորշ բնավորությունը: Կ. Մելիք-Շահնազարյանին ճանաչում է բերում 1900-01 թթ. Բաքվում լույս տեսած երգիծական ֆելիետոնների «Ջուռնա-Տմբլա» երեք գրքից բաղկացած ժողովածուն, որը 1907-08 թթ. Վաղարշապատում լրացվում և վերահրատարակվում է երկու գրքով՝ Ա, Բ⁴: Վերոհիշյալ գրքերում (ֆելիետոնները թեմատիկ առումով բազմազան են՝ ընտանեկան-կենցաղային, սոցիալական, քաղաքական) ակնհայտ է հեղինակի վարպետության համարյա թե բոլոր հատկությունների խտացումը՝ հոգեբանական թափանցում, սատիրիկ ընդվզում, ընդհանրացման ճաշակ, չափի զգացում:

Հեղինակը Ա. գրքի «Երկու խոսքում» իր երգիծական ստեղծագործությունները ժանրային առումով համարում է ֆելիետոն՝ հաշվի առնելով դրանց թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները, պատկերվող դեպքերի ու դեմքերի իրական գծերի պահպանումը, կյանքի որևէ արատավոր փաստի կամ հասարակական տեսակետից վնասակար երևույթի քննադատությունը: 80-90-ական թվականներին լույս տեսած Տմբլաչի Խաչանի ֆելիետոնները պատկանում են այդ ժանրի սոցիալական և քաղաքական մոտիվներով հագեցած տեսակին: Նախքան Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործության վերլուծությանն անցնելը, անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե ինչպես է նա հասկացել ու ձևակերպել իր գրական գործունեության հասարակական նշանակությունը: «Երանի կարողանայինք սորանով մի փոքրիկ ծառայություն անել մեր հայրենակիցներին, որոնց մտավոր և բարոյական առաջադիմության ջերմ փափագողներից մինն է տողերիս գրողը» (գ. Ա, էջ 3):

² Տե՛ս «Մշակ», 1882, No 4, 1883, No 79, 1884, No 10:

³ Տե՛ս Գ.ԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, 116:

⁴ Տե՛ս Կ. Կ. Մելիք-Շահնազարյանց, Ղըլըցե կնանոց պընը փեշակը, Շուշի, 1882:

⁵ Տե՛ս Տմբլաչի Խաչան, Ջուռնա-Տմբլա, գ. Ա, գ. Բ, Վաղարշապատ, 1907, 1908:

Փաստորեն Տմբլաչի Խաչանը պատմողի կերպարն է, և ամեն ինչ երգիծվում կամ արժեքավորվում է նրա տեսանկյունից: Հենց այս մեկնակետից պետք է կարևորել մարդկային ամենատարած թվացող կապերն ու բախումները բարոյական մեծ հիմնախնդիրների ելակետից դիտելու հեղինակի համարձակությունը: 1887 թ. «Նոր -Դարի» «Քրոնիկոնից» տեղեկանում ենք, որ Տմբլաչի Խաչանը այնքան է գրավել, հուզել և ծիծաղացրել մեր ժողովրդին, մանավանդ Ղարաբաղի գավառի հայերին, որ պարբերականը ստանալուն պես ընթերցողը բանասիրականի բաժնում Խաչանին է որոնում: Պարզվում է, որ քաղաքում ձեռքից ձեռք է անցնում Տմբլաչի Խաչանի լուսանկարը՝ տմբլան ձեռքին, իսկ տմբլաչի վրա հետևյալ տողերը՝ «Հինչըք ասըմ, տմբլիս թխիմ, թաչէ...»:

«Էն դյունին անվալաթան» («Ջուննա-Տմբլա» - 1895) ֆելիետոն վիպակում, ուր նկարագրվում է Խաչանի երազում կատարած ճամփորդությունը (դժոխք - դրախտ-Լուսնթագ), տեսնում ենք բժիշկների, իրավաբանների, դոմայի անդամների խմբագիրների, վարժապետների, գրողների, գանձապետների, հոգաբարձուների, գործակալների, ճարտարապետների, հոգևորականների, անտառապահների, գողերի, մարդասպանների, խաբեբանների՝ իրական կյանքում գործած բազում անիրավությունների ընդհանրական մեղայականը: Ժամանակի մամուլն ու գրականությամբ զբաղվող մարդիկ նույնպես Կ. Մելիք-Շահնազարյանի երգիծական ստեղծագործությունները որակում են ֆելիետոն՝ հուսալով, որ դրանց օգնությամբ ժողովուրդը կաթափվի տնտեսական, քաղաքական և բարոյական քնից: «Աղբյուրը» Խաչանին համարում է մեր արդի «նշանավոր ֆելիետոնիստը»⁶, իսկ Կ. Մելիք-Շահնազարյանի գրչընկեր Աշոտ Աթանասյանի (Սալ-Ման) կարծիքով «Տմբլաչի Խաչանի ֆելիետոնները իրենց բովանդակությամբ և ձևով հիշեցնում էին ռուս երգիծաբան Սալտիկով Օչեդրիհի «Губернские очерки» պատմվածքները: Սուր դատողություն, կյանքի հումորով լի հեզանք ու ծաղր բոլոր տեսակի ու դիրքի հարուստների ու մեծամեծների նկատմամբ: Եվ եթե ընթերցող հասարակության հոծ բազմությունը նրան քիչ ծանոթ է, դրա պատճառն այն է, որ Տմբլաչի Խաչանն իր պատմվածքներն ու ֆելիետոնները գրում էր Ղարաբաղի բարբառով»:

Տմբլաչի Խաչանի ընտանեկան-կենցաղային ֆելիետոնները երգիծանքի ներգործող ուժով համակողմանիորեն ուրվագծում են կյանքի լուսավոր և ստվերոտ կողմերը՝ պայքար ծավալելով հասարակական կյանքում կանանց դերն ակտիվացնելու և նրանց նյութական մոլորություններից ձեռքազատելու համար: Օժտված լինելով երգիծելու բացառիկ ձիրքով՝ Տմբլաչի Խաչանը պատկերում է դարավերջի գավառական քաղաքի անցուղարձը՝ սպանիչ ծաղրի ենթարկելով վերնախավի «դամանների պըընդիշակը», սպառողական հոգեբանությունը: Արտացոլելով տվյալ ժամանակաշրջանի Օուշիում բնակվող կանանց հիմնական զբաղմունքն ու հետաքրքրությունները՝ Տմբլաչի Խաչանը ցավալի փաստի առաջ է կանգնում: Այդ «դամանները», որոնց շարքում են «Աննա Պետրովիչնան, Ելենա Նիկիտիչնան, Լիզան» կյանքում չունեն որևէ նպատակ, բացի վատնելուց և «կավալերներ» որսալուց, մանր-մունր հարցերի շուրջ շաղակրատելով՝ հերթական օրը սպառելուց: Ահա թե ինչ է պատմում Աննա Պետրովիչնան այն պրոֆեսորի մասին, որն ախտորոշել է իր հիվանդությունը. «Հալալ կես սհաթ շոռոտ-շոռոտու ըրավ, ասից վասպալենի յաիչնիցի ա, մին էլ ներվեննի ազար...» (գ. Բ, էջ 75): Բժշկությունը համարելով «փողի թալակ»՝ խոսակիցը ավելացնում է, որ քարը գլուխը, միայն թե հիվանդության պատրվակով կարողանան ամուսիններից համոզել և ամեն տարի առողջարան գալ: Ընտանեկան-կենցաղային ֆելիետոնների այս շարքն ամբողջանում է Տմբլաչի Խաչանի Նոր տարվա շնորհավորանքով՝ ուղղված «մեծատուն խանըմներին». «Ըստվածանա ծեզ մհար հինչ յանթիմ, քանի վեր ամեն հինչան բուբուլ օնիք, մենակ մին պիծի պեն չօնիք՝ խելք» (գ. Բ, էջ 197):

Կենցաղի բացասական արտահայտությունների մեջ տեսնելով հասարակական չարիք՝ երգիծաբանը համընդհանուր անհանդուրժողական կարծիք է ստեղծում՝ վերջիններիս հակադրելով ազգային առողջ ավանդների կրողներին:

⁶ «Աղբյուր», 1917, մայիս-հունիս, էջ 89:

⁷ «Գրական թերթ», No 19, 1940, հուլիսի 20:

Ինչպես Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին, Խաչանը նույնպես կրում է որոշակի սոցիալական գաղափարներ: Պուղին ինքը մանրապատումներում ներկայանում է իբրև աղքատ գյուղացի⁸: Ըստ մի զվարճապատումի, նրա ողջ ունեցվածքը տեղավորվում է մի խուրջինի մեջ⁹: «Ջուռնա Տմբլա» թիվ 13-ի «Մի՛ն քանն անքննելի պեներում» Խաչանը նույնպես ներկայանում է որպես մի հասարակ չքավոր գյուղացի, որի թողած «երկու դալան կայքը դադիմի գուռնան ար, մին էլ տմբլան ուրան կուպլներավը» (գ. Ա, էջ 2): Ընձվածների պաշտպան Պըլը Պուղու մամն՝ նա ևս ըմբոստանում է ընդդեմ դասային արտոնությունների և սոցիալական ոտնձգությունների, ի պաշտպանություն խեղճերի, անիրավության զոհերի, որոնք կեղեքիչների անասնձ հարստահարումից ոչ միայն չեն ստորանում, այլև ավելի արժանապատվորեն են ըմբռնում մարդու կոչումը: Տմբլաչի Խաչանի սոցիալական ընկալումների տեսանկյունից ուշագրավ է հարուստների և աղքատների ճաշացուցակը: Ընթացիկ բոլոր օրերին հարուստների համար բժիշկները խորհուրդ են տալիս հագեցած անմարս ուտելիքներ, մինչդեռ աղքատների համար՝

«Էրկուշեթթի - ցամաք հաց.

Իրեքշեթթի - թրջած հաց.

Չուրեքշեթթի - փիրփեթ.

Հինգըշեթթի - փըրփըտաջուր.

Օրփաթ - հըրվանա փոխ առած հաց.

Գյիրգյամուտ - պաներ հաց թա վեր ինի.

Գիրակի - ասծու տվածան:

Կանդիստորականներին մհար սաղ շափաթը քլուֆթա: Օուշվըցուց մհար սաղ տարին ոչխարու թափան» (գ. Ա, էջ 66):

Տմբլաչի Խաչանը ատում է կուտակման մոլուցքով տարված դրամական աշխարհի տերերին և որպես յուրատեսակ նախազգուշացում բավական արդիական հարցադրում է անում. «Խե՛ չըն էնքան օտըմ, վեր կարին մարսին, մին էլ կերածենն զկուտալով ըոխներավը վեր չածին» (գ. Բ, էջ 140):

Գրողը մատնացույց է անում ոչ միայն գավառական կյանքի հետամնացությունը, կենցաղում և մտքերի մեջ իշխող հնածես սովորությունն ու նախապաշարմունքները, այլև աշխարհի քաղաքական անցուդարձերը, հայոց հարցի միջազգային քննության հետ կապված սին պատրանքները. «Ախր խե ընք մուռանըմ, վեր էրեզ մեկալ օրը հային կտորըմ ին, շեները կրակ տամ, վե՛ր Եվրոպու լյուսավեր սոցիալիստը հային կոնան փոնից, յարան վըըցրավ, յա մին քաղցր խոսք ասից, վե՛ր նեմեցը, ֆոանգը, ինգիզը յա պարկապզուկ փչող իտալացին եկավ հային արտասուները սրփից, ախր պատառ մետք ըրեք է՛...» (գ. Բ, էջ 240):

Ուշագրավ են մեծ տերությունների դիվանագիտական անպարարություններից հոգնած Տմբլաչի Խաչանի հեռագրերը.

«Լոնդոն, Չեմբերաքլանդին - ամմա քեթըտ իրզընանըմ ա, հա՛ ա՛ ա՛...» (գ. Բ, էջ 105):

«Բերլին, Բիսմարկին - դինջ կա՛ց, ես քու հընգեր չըմ» (գ. Ա, էջ 66):

Երգիծաբանը ձաղկում է սուլթանական Թուրքիայի կողմից մեր ժողովրդի արևմտյան հատվածի նկատմամբ ծրագրավորված կամայականությունները, ճնշումն ու բռնությունը: Այս շրջանում գրողի մեծագույն ծառայությունը ժողովրդի հանդեպ պիտի համարել այն, որ նա դեպքերի, իրադարձությունների ճշմարտացի պատկերմամբ սթափեցնում է ժամանակի հասարակական միտքը: Ըիշտ ըմբռնելով, որ արևմտահայերի ազատագրման հարցը չի կարելի կապել ոչ ազգային ջոջերի գործունեության և ոչ էլ արևմտաեվրոպական դիվանագիտության հետ՝ քրիստոնեական հումանիզմի քարոզիչ Տնգլբազ Խաչանը որոշ ֆելիետոններում ճակատագրի անիրավությանն է վերա-

⁸ Տե՛ս Ա. Ղազիյան, Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, թիվ 9, էջ 66:

⁹ Տե՛ս Գ. Ենթմազանյան, Անեկդոտներ, զվարճալի գրույցներ, համառոտ դեպքեր և առակներ մեծ մասամբ ազգային կյանքից առած, Թիֆլիս, 1878:

գրում մեր ժողովրդի արևմտահայ հատվածին բաժին հասած դժբախտությունը. «Հինչ վեղը տա կլխին հայը, ընդրա անտիրական ճկատին սև օր ա կիրված. սև օրավ էլ պեղմա չրու վերչը քհնա» (գ. Ա, էջ 47): Նա սպանիչ ծաղրի է ենթարկում իրենց ազգային գործիչներ հորջորջող կեղծ «պարեկործներին» և որոշում է ազգասերների սակագինը ընկնելու դեպքում զինվորագրվել նրանց բանակին: Տմբլաչի Խաչանի արդար գայրույթը ուղղված է բոլոր սուտ բարեգործների, կեղծ ազգասերների, ժողովրդի անունից շահակրատող երեսփոխանների, ծույլ և անգործունյա հնամուլների դեմ: Ընկնելով լուսնթագի վրա՝ Տմբլաչի Խաչանը հայտնաբերում է մի իդեալական հասարակարգ, որի մասին գրողի երազանքը ձևավորվում է շահագործման և սոցիալական անարդարությունների նկատմամբ դժգոհության հողի վրա՝ պատմական զարգացման վերջնական շարժիչ ուժ համարելով կրոնական և բարոյական գաղափարների հերթափոխումը: Նրա երազած թոփխանան բոլորովին էլ մնան չէ Ղարաբաղի հայտնի Թոփխանային: Այստեղ ոչ գողություն, դատ ու դատաստան կա, ոչ հողի, կայքի, ունեցվածքի կոռուպ, ոչ էլ «թուզըթաթախ կործեր»: Տղամարդ ու կին անխոս, անծպտուն, առանց սակարկելու առևտուր են անում՝ «վեչ միսյա կա, վեչ դավթար» (գ. Ա, էջ 27):

Ի պատիվ Կ. Մելիք-Շահնազարյանի պետք է ասել, որ ընդհանուր առմամբ, նրան հաջողվել է շրջանցել «Նոր-Դարի» պահպանողական մտայնությունը: Բավական է ասել, որ դրախտից «Ռահան պելուն» հասցեագրված նամակում Տմբլաչի Խաչանը իր պարսավանքն է ուղղում ոչ միայն «Մուրճի», «Մշակի» նեղ թայֆայական հակառակությանը, այլև հարազատ «Նոր-Դարին», որի սեփական թղթակիցն էր ինքը. «Ընդել վեչ ծակ Նոր դարական տեսի, վեչ ճղճը Մշակական...յա Մուրճական», որ ամբողջ տարին միմյանց հայհոյելով՝ մեկի շինածը մյուսը քանդի, «միմին դյուզ խոսքը էն մինը ծոխ, սևը սիպտըկեցնի, սպիտակը սևըցնի...» (գ. Ա, էջ 28):

Տմբլաչի Խաչանը ոչնչացնող ծաղրի է ենթարկում լիբերալ մամուլի բարքերը, երգիծանքի ուժով ընդգծում է, թե որքան անտանելի են դարձել սնամեջ փաստերի հեղեղը, սուտը, ժողովրդի խոսքի անտեսումը: Դառնալով «Նոր-Դարի» գլխավոր աշխատակիցներից մեկը՝ աստիճանաբար Ղարաբաղի գավառական թղթակցի հրապարակախոսական երգիծանքը կուսակցական երանգներ է ստանում, և նա նույնպես նետվում է «Նոր Դարի» և «Մշակի» միջև մղվող գաղափարախոսական պայքարի հորձանուտը: Ի դեպ, մամուլի տարբեր օրգանների կողմից փոխադարձ վիրավորանքն ու անհանդուրժողականությունը սահման չեն ճանաչում. «Ես էլ կարիմ կազեթ տյուս պիրիմ, սաղ տարին ուշունց տամ, ուշունց լսիմ, տարվա վերջին էլ հարայ տամ՝ ազկին մշակն ըմ, փող տվեք ուշունց տամ, տալ չըք դյահի բեթար բիաբուտ կանիմ... Էհ, պելի, հինչ ասիմ, ալամը փիսացալ ա, մհենգ հունց վեր ալըմ ըս, փողդին պյասը տմբլիս ծենան շատ զիլ ա...» (գ. Ա, էջ 134):

Առևտրի կանոններով առաջնորդվող պարբերականներից, քարեկամության և եղբայրության հիմնի լրագրային կարգախոսներին Կ.Մելիք-Շահնազարյանը հակադրում է հասարակական համակեցության կնճոտ հարցերը, Օուշիի հայտնի կոտորածները: Հայերի համար կյանքի ապահովություն գոյություն չունի: Ղրամաֆոնի «Մեր ցավերան» գրույցից իմանում ենք, որ Օուշին շրջափակման մեջ է, ոստիկանությունը, հասարակական կարգ ու կանոնի պահպաններն այնտեղ սերտորեն համագործակցում են մարդասպանների, գողերի ու ավազակների հետ:

Տմբլաչի Խաչանի քաղաքական երգիծանքն ուղեկցվում է խոր դրամատիզմով՝ իբրև հետևանք այն բանի, որ թուրքական մոլեռանդությունը հայերի համար ստեղծում է ստրկական վիճակ: Եվրոպական դիվանագիտության աչառու խաղերի հետևանքները ճաշակած հայ մարդու ամբողջ գայրույթով երգիծաբանը գերմանացի կանցլեր Բիսմարկից, անգլիացի քաղաքագետ Գլադստոնից, մարկիզ Սոլսբերիից և այլ դիվանագետներից չի ակնկալում քաղաքական առաքինության և ոչ մի դրսևորում: Բացահայտելով հայ ժողովրդի պատմական ճակատագրի ամբողջ ողբերգականությունը՝ Կ. Մելիք-Շահնազարյանը քաղաքական ազատության մեջ է տեսնում փրկության միակ ելքը: Տմբլաչի Խաչանը ակտիվ պայքարի կողմնակից է: Նրա համոզմամբ, հայը պետք է և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես սթափ ու պատրաստ լինի դիմագրավելու-ըրընը-

հան հիլի, տկրհան ծիլի» հակառակորդին, որը օձի պես «ուրան խորիւր փոխըմ ա, ամա խայաթը փոխում չի» և հարմար առիթի է սպասում, «վեր մին օր վեճնիտ տակը քանդի, քեզ վերին մեչին բաթմիշ անի, հային մեռոնած օջախը կյուլու ճտերալ լցնի» (գ. Բ, էջ 211-212):

Ինքնըստիներջան պարզ է քաղաքական եզրակացությունը և զարմանալիորեն այժմեական:

Եթե հարափոփոխ ժամանակների համակցության մեջ Կոստանդին Մելիք-Օահնազարյանի երգիծանքն իր գաղափարականությամբ շարունակում է մնալ կենսունակ, նշանակում է հեղինակը խորապես գիտակցել է իր ձեռնարկած գործի լրջությունն ու կարևորությունը:

Եվ թեև նրա ստեղծագործության մեջ դրականի անմիջական կերպարային կրողներ չկան, բացասականի սպանիչ ծաղրով երգիծաբանը հանդես է բերում իր Ավիրվածությունը հակադիր սկզբունքներին: Արդարև, հեղինակն անուղղակիորեն ընթերցողին մղում է դեպի իր բարոյա-քաղաքական ըմբռնումների ոլորտը:

Ֆելիետոններում Խաչանը ներկայանում է կամային և վճռական հայացքով, կրտուկ և անմշակ շարժումձևով՝ խստապարզ արտաքինի տակ պարփակելով բացառիկ քնքնուշ ու տառապող հոգի, անկաշկանդ միտք: Իր կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը Կ. Մելիք-Օահնազարյանը ծառայեցրել է մի բարի Ապատակի՝ մարդկանց օգտակար լինել, բաժանել իր հերոսների տխրությունն ու կսկիծը, կարելույն չափ սպեղանի լինել նրանց վերքերին և ծիծաղաշարժ ու անբնական իրավիճակներում՝ հայրենակիցներին ճիշտ ուղու վրա կանգնեցնել: Պատահական չէ, որ այդ Ապատակին հասնելու համար գրական հայերենի, գրաբարի հմուտ գիտակը՝ ռուսերենին, ֆրանսերենին հիանալի տիրապետող Կ. Մելիք-Օահնազարյանն իր ստեղծագործության համար ընտրեց Ղարաբաղի բարբառը և «Զուռնա-Տմբլա» Ա գրքի տիտղոսաթերթում երկը ձոնեց հայրենակիցներին. «Իմ աչքի լույս դարաբաղցոց, մեծին ու պուճուրին փեշքեշ»:

Т. А. АЙРАПЕТЯН — Социально-политическая сатира К. Мелик-Шахназаряна (Тмблачи Хачан). — К. Мелик-Шахназарян (1857-1940 гг.) является одним из видных деятелей армянской культуры конца XIX и первых десятилетий XX века.

В тематически разнообразных своих фельетонах (семейно-бытовых, социально-политических) сатирик отражает особенности историко-этнографической области Арцах 80-90-х годов XIX века, и, в частности, города Шуши как культурно-экономического центра армян Арцаха.

Его патриотическая идея о сохранении национальной самобытности и по сей день имеет актуальное значение.